

«ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԳԱՄ» ԸՄԲՈՒՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

Ժամանակակից հայերենի շարահյուսության թե՛ ընդհանուր ու հիմնա-
լին, թե՛ մասնավոր, երկրորդական համարված հարցերը համեմատաբար ա-
վելի սակավ են լեզվաբանների ուշադրությանն արժանանում: Օրինակ, Հ. Ա-
սատյանի անվան լեզվի ինստիտուտում կառուող և հանգամանալից քննար-
կումներ եղան՝ նվիրված հայերենի ձևաբանության (մասնավորապես հոլով-
ման ու խոնարհման) հարցերին, և դրանից հետո նույն հարցերի վերաբերյալ
մի ամբողջ շարք աշխատություններ լույս ընծայվեցին, մինչդեռ շարահյու-
սական որևէ հարց նման քննարկման չի արժանացել: Բայց և չի կարելի չնշել,
որ վերջին տասնամյակում ավելի ու ավելի են հետաքրքրություն առաջաց-
նում նաև հայերենի շարահյուսության հարցերը՝ ներկա հոդվածը մի փորձ է
մեկնաբանելու հայերենի շարահյուսության մի մասնավոր խնդիր, որ վերա-
բերում է եղանակավորողներին և կոչականին:

Եղանակավորող անվանումն օգտագործում ենք շարահյուսական տեսան-
կյունից՝ աչդպես անվանելով նախադասության մեջ տեղ գտնող այն միավոր-
ները, որոնք րստ արտահայտվողի վերաբերմունքի տարբեր կերպ եղանակա-
վորում են նախադասությունը: Եղանակավորողի դեր նախադասությունում
կատարում են վերաբերականները (եղանակավորող բառեր ու կապակցու-
թյուններ) և ձայնավորությունները: Եղանակավորողների մի տարատեսակն են
մեկնականները, որոնց առանձին չենք անդրադառնալու, քանի որ քերականա-
կան արժեքով դրանք գրեթե նույնն են եղանակավորողների հետ: Քերա-
կանական կապակցման տեսակետից եղանակավորողներին նման է կոչականը:

Սովորաբար այս միավորները նախադասության անդամ կամ նախադա-
սության բաղկացուցիչ մաս չեն համարվում¹: Հաճախ նրանց համարում են
նախադասությունից դուրս, արտանախադասական: Հայ քերականագիտու-
թյան մեջ (և ոչ միայն լայտեղ) նման մոտեցման հիմքում հավանաբար ըն-
կած է նախադասության անդամ անվանման մի յուրահատուկ ըմբռնումը:
Եթե մի առաջ վերանայնորդից և հարցին մոտենանք սովորական տրամա-
բանությամբ, ապա ինքնըստինքյան պարզ կլինի, որ մի նախադասության
կազմի մեջ մտնող բոլոր բառերն ու բառակապակցությունները արդեն իսկ աչդ
նախադասության բաղկացուցիչ մասերն են կամ անդամները:

Հայ քերականագիտության մեջ հարկ եղած հստակություն և պատկերա-
ցումների միասնականություն չկա նախադասության անդամ ըմբռնման վե-
րաբերյալ²:

¹ Այդ ընթացքում շարահյուսագիտության մեջ նոր ու ծավալուն տեսությամբ հանդես ե-
կավ ակադ. Դ. Ջահուկյանը, և նրա «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները»
(1974 թ.) աշխատության շարահյուսագիտական մասը (երրորդ և չորրորդ բաժիններ) Մ. Ս-
րենյանի «Աշխարհաբարի շարահյուսությունից» (1912 թ.) հետո մի կարևոր նշանաձող եղավ
այս լատարեզում: Նույն ժամանակամիջոցում հայերենի շարահյուսության մի շարք հարցերի
լուսաբանմամբ հանդես են եկել Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը, Ս. Գյուլբուրդյանը,
Է. Աթայանը, Խ. Բատիկյանը, տողերիս հեղինակը և ուրիշներ:

² Հայ քերականագիտության մեջ վերաբերականով արտահայտված պարագաները նախա-
դասության անդամ համարելու մասին տե՛ս Մ. Ասատրյան, Հայոց լեզու, 1983, էջ 440—
443:

³ Օրինակ, «Շուտ արթնանալը առողջ լինելու գրավականն է» նախադասության մեջ ոմանք
ենթակա են համարում շուտ արթնանալը բառակապակցությունը, ուրիշները՝ արթնանալը բառը

Ինչպես ցույց է տալիս հայերենի շարահյուսական վերլուծման փորձը, վերոհիշյալ սովորական տրամաբանությունը, ըստ որի տվյալ նախադասությունն մեջ գտնվող բոլոր միավորները այդ նախադասության բաղադրիչներն են կամ անդամները, ինչպես կփորձենք ցույց տալ, հիմնավորվում է նաև քերականագիտորեն։ Այս հարց է, թե ինչ անուն կտանք նախադասության մեջ եղած այս կամ այն միավորին։ Մի մասին կարելի է տալ նախադասության անդամ անունը, ուրիշներին գուցե՝ նախադասության միավոր կամ՝ բառատնող բառերը, թերևս, կարելի է կոչել բառակապակցության անդամ, իսկ ալգայիսի բառակապակցության գերադասն անվանել այսինչ կամ այնինչ բուն անդամ (բուն որոշիչ, բուն պարագա) և այլն. սրանք, կարծում ենք, երկրորդական հարցեր են, իսկ կարևորը տվյալ դեպքում հետևյալն է. մի նախադասության կազմի մեջ մտնող որևէ փաստական բաղադրիչ հիմք կա՞նք համարելու առ նախադասությունից դուրս, ոչ բաղադրիչ, թե՞ ալգայիսի հիմք չկա։

Նախադասության անգամ ասելով ավելի հաճախ հասկանում են նախադասության այլ անդամների հետ քերականորեն կապակցված միավորը։ Կոչական, եղանակավորողները նույնպես քերականորեն կապակցված են լինում, թեև հաճախ ոչ թե որևէ մեկ անդամի, այլ՝ ամբողջ նախադասության հետ։

Կա տարածված տեսակետ, ըստ որի նախադասության մեջ գտնվող միավորներից մի քանիսը միմյանց հետ կապակցված են քերականորեն, մյուսները՝ միայն տրամաբանորեն կամ իմաստով։ Այս վերջինների մեջ են դրվում կոչականը և եղանակավորողների դեր կատարող ձայնարկություններն ու վերաբերականները։

Քերականական կապ ասելով հասկանում են կապակցության երեք տեսակները՝ համաձայնություն, խնդրառություն, առդրություն։ Ալգայիսով, ստացվում է, որ, եթե նախադասության մեջ գտնվող որևէ իմաստակիր միավոր կապակցության այս երեք տեսակներից որևէ մեկով չի կապակցված մի այլ միավորի հետ, կնշանակի այն առհասարակ քերականական կապակցման մեջ չէ, դուրս է այդ կապակցումից, իսկ դա էլ, ըստ այդ մասնագետի, նշանակում է, որ տվյալ միավորը նախադասության անդամ (կամ միավոր) չէ, դուրս է նախադասությունից։ Այս պատճառով էլ եղանակավորողները, մեկնականները սովորաբար կոչվել են և այժմ էլ հաճախ կոչվում են միջանկյալ բառեր և բառակապակցություններ, միջաբերություններ և այլն, այն իմաստով, որ դրանք իբրև մտցված են նախադասության մեջ իբրև դրսի տարրեր և նախադասության բաղադրիչ չեն, լավագույն դեպքում կից են նախադասությանը։

Այս մոտեցումը վաղուց կասկածի տակ է առնվել կամ մերժվել։ Օրինակ, ռուս լեզվաբաններից Ա. Ռուչնևը հանգամանորեն ներկայացնելով կոչականի և միջանկյալ բառերի ու բառակապակցությունների վերաբերյալ եղած կարծիքները ռուս լեզվաբանության մեջ⁴, կտրապանապես մերժում է վերոհիշյալ մոտեցումը, գրելով. «Այդպես, մի շարք խոշոր լեզվաբանների ջանքերով ստեղծվեց մի «պրոկրուստեսյան մահիճ», որի մեջ ոչ մի կերպ չէր հարմարվում միջանկյալ բառերի՝ իբրև նախադասության հատուկ տեսակ անդամների մասին պատկերացումը, իսկ այն ամենը, ինչ չէր հարմարվում այդ «մահիճին», հալոտարարվում էր «նախադասությունից դուրս» կամ «ներան կից» (տե՛ս Օվսյանիկո-Կուլիկովսկու, Ա. Ա. Շախմատովի, Ա. Մ. Պեշկովսկու և այլոց մոտ)»։ Ապա՝ «Կոչականի» իբրև քերականորեն նախադասության հետ կապակցված անդամի վերաբերյալ եղած ավանդական հայեցակետի մեջ հիմնական մեթոդաբանական սխալն այն է, որ լեզվաբաններն անտեսում էին կոչականի և նախադասության մնացած մասի միջև առկա քերականական կա-

կամ ոմանք ստորոգյալ են համարում գրավախմբ է կապակցությունը, ուրիշները՝ առողջ չկան։ Գրավախմբ է բառակապակցությունը։

⁴ А. Г. Руднев. Синтаксис современного русского языка. Учеб. пособие для вузов. М., 1963, с. 200—206, 242—247.

⁵ Նույն տեղում, էջ 204։

պակցությունների յուրահատկությունը և գործառութային նշանակությունը»⁶։ Այնուհետև, Ա. Ռուդնևը, շարադրելով իր տեսակետը՝ թե՛ «միջանկյալ բառերը» (այսինքն՝ եղանակավորողները) և թե՛ կոշականը համարում է նախադասության լիարժեք անդամներ ու դրանց քերականական կապակցությունը նախադասության մնացած մասի կամ որևէ այլ անդամի հետ անվանում է համահարաբերություն (соотношение)⁷։

Եղանակավորողները և կոշականը նախադասության անդամ չհամարելու տեսակետը հայ քերականագիտության մեջ թափանցել է ուսական քերականագիտությունից, որտեղ այժմ վերանայվում է այն, ընդ որում, կարծում ենք, որ հայերենի համար առավել ևս չի հիմնավորվում նախադասության անդամ և ոչ անդամ հիշյալ բաժանումը։ Օրինակ, հիմք չունենք ժամանակակից հայերենի համար «Նա իսկույն կգա» նախադասության մեջ իսկույն պարագան համարել առդրությամբ կապակցված միավոր և նախադասության անդամ, իսկ «Նա անպայման կգա» նախադասության մեջ անպայման եղանակավորողը համարել ընդհանրապես ոչ կապակցված, ոչ նախադասության անդամ, դուրս նախադասությունից, ինչպես արվում է սովորաբար մեզանում։ Կամ՝ «Ես ե՛րբ կգա» նախադասության մեջ ե՛րբ-ը (պարագա) համարել քերականորեն կապակցված բառ, նախադասության լիարժեք անդամ, իսկ «Նա արդյո՞ք կգա» նախադասության մեջ արդյո՞ք-ը (եղանակավորող) դիտել նախադասությունից դուրս, քերականորեն չկապակցված։

Նախադասությունը շարահյուսական առավելագույն և ամենակուռ ու նաև ամենամեղմը զգացված միավորն է. այն, եթե մեկից ավելի բառերից է կազմված, իմաստային և էմոցիոնալ-կապակցական անփակտելի ամբողջություն է։ Նրա մեջ մտնող յուրաքանչյուր բառ և բառակապակցություն իր իմաստային և քերականական որոշակի դերն ունի։ Եթե որևէ բառ նախադասության մեջ դորժածված է, կնշանակի արդեն դրանով այդ բառը նախադասության անքակտելի մասն է կազմում. այդ բառն արտահայտվողին պետք է եղել, որ գործածվել է, այն իր իմաստը գումարում է նախադասության մյուս միավորների արտահայտած իմաստներին, և այդպես է գոյանում ամբողջ նախադասության բովանդակությունը։ Իսկ նախադասության մեջ ամեն մի բառ կամ բառակապակցություն, որ իմաստով կապված է նախադասության որևէ այլ միավորի կամ ամբողջ նախադասության հետ, անպայման նաև քերականական կապակցության մեջ է այդ անդամի կամ նախադասության մնացած մասի հետ։ Այսպես, շարահյուսական որևէ չափանիշ չի մնա։ Օրինակ, «Կարմիր խնձոր կա» նախադասության մեջ կարմիր-ը (որոշիչ) հոլով չունի, այն պարզապես հարել է խնձոր գոյականին, դրվել է նրա մոտ, բայց լեզվաբաններն այդտեղ քերականական կապակցություն են տեսնում (և իրավացիորեն) ու այն անվանում առդրություն։ Ինչո՞ւ։ Ամենից առաջ այն պատճառով, որ կարմիր-ը և խնձոր-ը իմաստով կապված են միմյանց հետ։ Իսկ դա անպայման նշանակում է, որ նրանք կապված են նաև քերականորեն։ Նույնն է՝ «Միայն խնձոր կա» նախադասության մեջ. միայն-ը (եղանակավորող) իմաստով կապակցված է խնձոր-ի կամ խնձոր կա-ի հետ, կնշանակի քերականորեն էլ է կապակցված, և հիմք չկա այդ միայն-ը հայտարարել նախադասությունից դուրս, ոչ նախադասության անդամ, իսկ վերոհիշյալ կարմիր-ը՝ կապակցված անդամ և այլն։ Կամ՝ «Յավոք սրտի, չեմ գալու» նախադասության մեջ ցավոք սրտի եղանակավորողը գործածվել է արտահայտվողի կողմից, կնշանակի այն իր դերն ունի նախադասության արտահայտած բովանդակության մեջ և ուրեմն տվյալ նախադասության անքակտելի միավորն է, բովանդակությամբ սերտորեն առնչված այդ նախադասության հետ, որ չի կարող չնշանակել նաև քերականական առնչություն, այսինքն՝ կապակցություն։

6 Նույն տեղում, էջ 246։

7 Նույն տեղում, էջ 204—205, 246—247։

Կոչականը և եղանակավորողները նախադասության անդամներ են. որ տեսանկյունից էլ մոտենալու լինենք, և քերականորեն կապակցված են նախադասության մնացած մասի կամ ողնէ անդամի հետ: Միայն պետք է նշել այդ կապակցության կամ կապակցումների բնույթը:

Այժմ բնագրային օրինակներով համառոտակի ներկայացնենք արդի հայերենում կոչականի և եղանակավորողների քերականական արժեքը: Կոչականը ցույց է տալիս անձ կամ իր, որին ուղղվում է արտահայտվողի խոսքը. Օրինակ, «Անո՛ւշ, տուն առի» (Թ 1, 28) նախադասության մեջ Անուշ-ը ցույց է տալիս այն անձը (այդ անձի անունն է), որին դիմում է խոսողը, այսինքն՝ կոչական է: Կամ՝ «Այսօր դու քաղցր ես նայում, առավոտ» (Տ 1, 202) նախադասության մեջ կոչականը առավոտ-ն է, որ ոչ թե անձի, այլ իրի ըմբռնում է արտահայտում:

Կոչականը կարող է արտահայտվել և՛ մի բառով, և՛ բառակապակցությամբ: Օրինակ, «Նանի՛, նեղքեում ես մարդիկ տեսա» (Թ 1, 21) նախադասության մեջ կոչականը նանի բառն է, իսկ «Շնորհակալ եմ, անցվոր ախպեր» (Թ 1, 39) նախադասության մեջ՝ անցվոր ախպեր բառակապակցությունը. հոշական բառակապակցությունը կարող է ծավալուն լինել, ինչպես (կոչականն ընդգծված է)՝ Կապույտ երկնքի ոսկեղեն աստղեր, Ձեր հեռից դուք միշտ սեփական եք նրան» (Տ 1, 48). բառակապակցությամբ արտահայտված կոչականի մեջ գեղարարական (աստղեր) կարելի է անվանել բուն կոչական:

Կոչականը (կամ բուն կոչականը) արդի հայերենում ունենում է ուղղական հոլով, որը միշտ լինում է առանց ն (ր) որոշիչ հոլի: Իսկ ս և ղ հոլեր կոչականն առնում է. օրինակ, «Տուր, սիրեցյալ զավակս, նվիրիք քո հարսնացուին ինչ որ հաճելի է քեզ» (Մ, 275): Կոչականն ունի երկրորդ դեմքի արժեք, քանի որ ըստ դեմքի համընկնում է դու, իմեղ, դուք, ինքներդ դերանուններին:

Քերականական հայեցակետից արդի հայերենում կոչականները երկու տեսակ են լինում. ա) համաձայնող կոչական, բ) չհամաձայնող կոչական: Երբ կոչականի ցույց տված անձը կամ իրը նույնանում է ենթակայի արտահայտած անձի կամ իրի հետ, ունենում ենք համաձայնող կոչական: Այդպիսի նույնության դեպքում կոչականն ու ենթական քերականական թվով համընկնում են, և քանի որ ենթական էլ թվով համաձայնած է ստորոգյալի (դիմավոր բայի) հետ, կոչականը, փաստորեն, ենթակայի միջոցով նույնպես համաձայնության մեջ է գտնվում ստորոգյալի հետ: Օրինակ, «Հե՛յ պարոններ, ախանջ արեք» (Թ 1, 185) նախադասության մեջ ղուք ենթական զեղչված է (վերականգնված՝ «Հե՛յ, պարոններ, դուք ախանջ արեք»), և այստեղ ենթական ցույց է տալիս միևնույնը (պարոններ): Ենթակայի զեղչման գլխավոր պատճառը հենց այն է, որ կոչականն արդեն արտահայտել է այդ ղուք-ի բովանդակությունը, և ահա կրկնելու հարկ չկա այս նախադասության մեջ: Ենթական իր հոգնակի թվով արտահայտված է պարզեցնել կոչականի մեջ: Ստորոգյալն էլ ունի հոգնակի թիվ, որ նշանակում է, թե համաձայնել է կոչականի հետ: Ծիշտ է, այդ համաձայնությունը կատարվել է զեղչված ենթակայի «միջնորդությամբ», այսինքն՝ համաձայնող ենթական է, որի դերն ստանձնել է կոչականը, բայց միևնույն է, դա համաձայնություն է: Այսպիսի դեպքերում, եթե կոչականը փոխակերպում ենք եզակի թվի, ստորոգյալն էլ է եզակի դառնում. օրինակ՝ «Հե՛յ, պարոն, ախանջ արա»: Այլ օրինակ՝ «Արե՛, արե՛, ե՛կ, ե՛կ» (Ա, 12). այստեղ էլ եթե եզակի կոչականը դարձնենք հոգնակի, ստորոգյալն էլ հոգնակի կդառնա՝ «Արենե՛ր, արենե՛ր, եկե՛ք»:

Սակավ դեպքերում այսպիսի կոչական ունեցող նախադասության ենթական նույնպես արտահայտված է լինում առանձին բառով (դերանվամբ), ինչպես՝ «Ջա՛ն, հայրենի՛ անտառներ, Դուք եք կանչում ինձ ձեր քով» (Թ 2, 265). այստեղ ոճական նկատառումով ենթական (դուք-ը) անհրաժեշտ է, քանի որ շեշտված է (կրում է տրամաբանական շեշտ): Այսպիսով, համաձայնող կոչա-

կանի դիպքում առկա է առնվազն թվային համաձայնություն, որով կոշականը քերականորեն կապակցվում է ստորոգյալի հետ:

Համաձայնող կոշականի դեպքում կոշականն ու ենթական տարբեր անձ (կամ իր) են ցույց տալիս, և կոշականի ու ստորոգյալի միջև չկա համաձայնություն: Օրինակ. «Բաղը մարդ կգա, Դիլան» (Բ 1, 74). այստեղ Դիլան կոշականը և մարդ ենթական տարբեր են միմյանցից: Այս վերջինը համաձայնել է եզակի երրորդ դեմքի կգա ստորոգյալի հետ, իսկ կոշականը՝ ոչ: Կամ՝ «Այլ հույսերը թող շմխիթարեն քեզ, տիկին» (Բ 7, 120) նախադասության մեջ տիկին կոշականը եզակի է, իսկ հույսերը ենթական՝ հոգնակի, որ և համաձայնել է շմխիթարեն նույնպես հոգնակի ստորոգյալի հետ: Դարձյալ՝ կոշականը որևէ կերպ չի համաձայնել ստորոգյալի հետ⁸: Ասվածից չպետք է եզրակացնել, թե միայն համաձայնող կոշականն է քերականորեն կապակցվում նախադասության հետ: Այս դեպքում էլ, ինչպիսին էլ լինի կոշականը, իմաստային կապը անպայման ենթադրում է քերականական կապ:

Կոշականի կապակցությունը նախադասության հետ նման է առդրությանը կամ շարահարությանը: Դա մի չլրատեսակ շարահարություն է, որ կարելի է անվանել ընդհանրական: Կոշականը քերականորեն շարահարվում է նախադասության մնացած հատվածին, որի հետ սերտորեն կապակցված է իմաստով:

Ընդհանրական շարահարությամբ նախադասության մնացած մասի հետ կապակցվում են երկու տեսակ կոշականներն էլ, իսկ համաձայնող կոշականը, դրանից բացի, ստորոգյալի հետ կապակցվում է նաև համաձայնությամբ: Օրինակ. «Բայց քո կյանքը վտանգի մեջ է, Սամվել» (Բ 7, 131). այստեղ կոշականն ու ենթական տարբեր են, և կոշականի ու ստորոգյալի միջև չկա համաձայնություն, բայց Սամվել կոշականը նախադասության մնացած հատվածի հետ անքակտելի կապի մեջ է, ամբողջ նախադասությունը կոշականի հետ միասին և՛ իմաստային, և՛ քերականական միասնական ամբողջություն է, որ նրանակում է, թե Սամվել կոշականը կապակցված է բայց քո կյանքը վտանգի մեջ է հատվածի հետ և՛ իմաստով, և՛ քերականորեն: Սամվել-ը նախադասության մնացած մասին շարահարված է, քերականորեն «դրված է» նրա վրա և միաժամանակ նրա լրացումն է: Ահա այսպիսի կապակցությունն անվանում ենք ընդհանրական շարահարություն, կարելի է անվանել նաև հարաբերման կամ հարաբերական շարահարություն: Այլ օրինակ. «Ծաղկես դու, Անդրի» (Բ 2, 235) նախադասության մեջ Անդրի կոշականը իմաստով և քերականորեն կապակցված է նախադասության մնացած մասի (ծաղկես դու) ամբողջության հետ, այլապես բերվածը՝ «Ծաղկես դու, Անդրի», նախադասություն, այսինքն՝ քերականական ամբողջություն չէր լինի: Այդ կապակցությունն այստեղ քերականորեն արտահայտվում է նաև կոշականի և ստորոգյալի համաձայնությամբ՝ ենթակայի (դու) միջնորդությամբ, ապա՝ կոշականի ընդհանրական շարահարությամբ ամբողջ նախադասության նկատմամբ:

Ընդհանրական շարահարությունն անվանումը բոլորովին պայմանական է: Կարելի է գտնել ավելի հարմար անուն: Կարևորն էությունն է, այն, որ կոշականը քերականորեն կապակցված է լինում նախադասության մնացած մասի հետ:

⁸ Ի վերջո, կոշականի բաժանումը համաձայնող և չհամաձայնող տեսակների գուցե և փոքր-ինչ պայմանական է, քանի որ կոշականը կարող է նախադասության այս կամ այն անդամի հետ թվային համաձայնության մեջ լինել նաև այն դեպքում, երբ ենթականի համեմատ տարբեր անձ կամ իր է ցույց տալիս. օրինակ, «Այ սղա, ո՛ւր է քո գրիչը» նախադասության մեջ ենթական է գրիչը, կոշականը՝ սղա-ն, որը թվային համաձայնություն ունի և՛ է բայի, և՛ քո հատկացուցիչի հետ. կոշականը հոգնակի դարձնելու դեպքում՝ այդ երկու անդամները նույնպես հոգնակի են լինում («Ա՛յ սղա-ն, ո՛ւր են ձեր գրիչները», նաև՝ «...ձեր գրիչը»): Կամ՝ «Ա՛յ մարդ, քեզ համար եմ ասում» նախադասության մեջ քեզ-ն է համաձայնել կոշականի հետ (համտ. «Ա՛յ մարդիկ, ձեզ համար եմ ասում». ենթական է եզակի ես-ը):

Եղանակավորողները նախադասության այն միավորներն են, որոնք արտահայտում են խոսողի (կամ գրողի) զգացմունքային կամ մտածական վերաբերմունքները ասվածի (կամ գովածի) նկատմամբ: Հայերենում, ինչպես հայտնի է, եղանակավորման երեք գլխավոր տեսակներ կան՝ քերականական, հնչերանգային և բառային (ու բառակապակցային): Եղանակավորման այս վերջին տեսակը դրսևորվում է նախադասության մեջ առանձին բառերի և բառակապակցությունների օգտագործմամբ: Նախ դոա համար կան հատուկ խոսքի մասեր՝ ձայնարկություններ և վերաբերականներ: Ապա՝ հաճախ էլ այլ խոսքի մասեր են նույն նպատակին ծառայում կամ եղանակավորման դեր են կատարում տարբեր խոսքի մասերից բաղադրված բառակապակցություններ: Բառային եղանակավորման երկու տեսակ կա՝ մտածական և զգացմունքային: Առաջինն արտահայտվում է վերաբերականների, երկրորդը՝ ձայնարկությունների միջոցով: Երկու դեպքում էլ առկա են լինում նախադասության եղանակավորող անդամներ:

Եղանակավորողների և նախադասության մնացած հատվածի միջև նույնպես կա ընդհանրական շարահարական կապակցություն: Օրինակ, «Մի՞թե վերջին պոետն եմ ես» (Տ 1, 66) նախադասության մեջ մի՞թե եղանակավորող կապակցված է վերջին պոետն եմ ես հատվածի հետ և՛ իմաստով, և՛ քերականորեն: Առանց այդ մի՞թե-ի այս նախադասությունը լիովին կորցնում է հեղինակի առտահայտած բովանդակությունը: Այս աստիճան կարևոր է այստեղ մի՞թե բառը: Իմաստային կապը, ինչպես ասվեց, աշդեն իսկ նշում է քերականական կապի անպայման առկայություն: Առանց այդ քերականական կապի չէր լինի «Մի՞թե վերջին պոետն եմ ես» նախադասությունը որպես իմաստային և քերականական կապակցման ամբողջություն: Մի՞թե-ն նախադասության մնացած հատվածի հետ կապակցված է ընդհանրական շարահարությունում:

Եղանակավորող անդամի և նախադասության մնացած հատվածի կասյակցությունը շատ դեպքերում իրականացվում է գերադանցապես դիմավոր բառի միջոցով: Ավելի ճիշտ՝ անմիջական կապը առավելապես եղանակավորող անդամի և դիմավոր բառի միջև է լինում: Օրինակ, «Մենք չե՞նք եղել արդյոք զարմանալի անփութ, հաճախ թեթև» (Չ 4, 34) նախադասության մեջ արդյոք եղանակավորողը ընդհանրական շարահարությամբ առավելապես կապակցված է չե՞նք եղել բայի և նրա միջոցով ամբողջ նախադասության հետ: Ընդ որում, այս նախադասությունը բաղկացած է ենթակայից (մենք), եղանակավորողից և ստորոգյալից (մնացած ամբողջը ստորոգյալ է՝ բաղադրված չենք եղել բայից և նշա ծավալուն լրացումը հանդիսացող՝ ստորոգելիական վերադրից): Նույնը դիտվում է՝ «Ա՛խ, տվեք ինձ քաղցր մի քուն» նախադասությունում: Ա՛խ եղանակավորողը շարահարությամբ առավելապես կապակցված է տվե՛ք բայի հետ և նրա միջոցով՝ նախադասության մնացած հատվածի հետ:

Եղանակավորողների գլխավոր հատկությունն, ինչպես հայտնի է, այն է, որ նրանք իբրև բառ կամ բառակապակցություն արտահայտում են ոչ թե առարկա, առարկայացված ըմբռնում, գործողություն, հատկանիշ և այլն, այլ մարդու տարբեր վերաբերմունքները, այսինքն՝ ոչ թե իրողություններ, այլ մարդու վերաբերմունքը դրանց նկատմամբ: Օրինակ, «Արդյոք հիշո՞ւմ ես» (Տ 1, 71) նախադասության մեջ արդյոք-ը եղանակավորում է հիշո՞ւմ ես-ը հարցալին մի նոր երանգով: Հիշելը կամ չհիշելը իրողություն է, իսկ արդյոք-ը

որպես այդպիսին ղոյություն չունի, այս սոսկ որոշակի վերաբերմունք է, Կամ՝ «Հե՛յ ջա՛ն, սփփ էլ զգույշ անցնենք» (թ 2, 268) նախադասության մեջ մենք-ը առարկայական ըմբռնում է, զգույշ-ը գործողության հատկանիշ, անցնենք-ը գործողություն, մինչդեռ հե՛յ ջա՛ն բացականչությունը, ինչպես և էլ-ը իրական երևույթներ կամ առարկաներ չեն. հե՛յ ջա՛ն-ը արտահայտում է որոշակի վերաբերմունք ասվածի նկատմամբ, եղանակավորում է «մենք էլ զգույշ անցնենք»-ը, իսկ էլ-ը շաղկապ է (շաղկապում է մեզ զգույշ անցնելը հայամի ասածի հետ), նաև ինչ-որ շարժում եղանակավորում է ասվածը:

Բոլոր դեպքերում եղանակավորող ունեցող ամեն մի նախադասություն ձևավորված, ամբողջացված է իր բաղադրիչները կազմող բոլոր բառերով, և այդ բառերը միաժամանակ տվյալ նախադասության՝ իբրև քերականական անկապտելի կապակցության միավորներ են: Վերը շարադրվածի հիման վրա, մեր կարծիքով, կոշականը և եղանակավորողները կարելի է անվանել նախադասության միավոր, կարծում ենք՝ ճիշտ կլինի նաև դրանք կոչել պարզապես նախադասության անդամ:

К ВОПРОСУ О ПОНЯТИИ «ЧЛЕН ПРЕДЛОЖЕНИЯ»

Р. А. ИШХАНЫН

Р е з ю м е

Одним из главных признаков предложения является как смысловая, так и грамматическая связь всех слов и словосочетаний между собой. Всякая смысловая связь в предложении обязательно обуславливает грамматическую связь. Подобная связь имеется также между обращением и остальной частью предложения, между модальным членом и остальной частью предложения или его каким-либо отдельным элементом. Эта связь отличается от согласования, управления или примыкания; ее можно условно назвать обобщенным примыканием. Все это четко наблюдается на материале армянского языка. Таким образом, обращение и модальный член—полноценные члены предложения.